

„ իսկ ականջաց հարկ է 'ի խնուր անդ  
„ աշացն կալ 'ի բաց , որպէս զի եթէ  
„ յանկարծադէպ ինչ վտանգ ուստեք  
„ հասանիցէ , ազդ 'ի շոխնդն ձայ .  
„ նից արարեալ՝ զարթուցանիցեն ըզ-  
„ մեզ :

„ Ո՞ իսկ 'ի վայրկեան ժամանակի  
„ քանդակէ յաչս իմ զերկին զերկիր  
„ և զծով , զտարակայեալսն յինէն  
„ գրեթէ յանբաւս : ( Օ իարդ զետեղ  
„ և որիշ կարգ ըստ կարգէ 'ի յան-  
„ ձուկ կազմածին զկայ առեալ ան-  
„ եղծ կերպարանք էիցս առհասարակ  
„ կայցեն՝ յականէն արեու մինչեւ 'ի  
„ դուզնաքեայս իսկ 'ի շամանդաղս :  
„ Վանի ևս հրաշակերտ իցէ ուղղոյս  
„ մերոյ յօրինուած , յորում գանձեալ  
„ պահին դասք դասք սքանչելի տեսա-  
„ բանաց բազմապատիկ իրաց , որք  
„ յօրէ ծննդենէ մերմէ ազգումն ինչ  
„ ազդեալ իցեն՝ ի մեզ : ( Օ արմանամք  
„ ապաքէն ընդ մատենիցն գիւտս , զի  
„ 'ի նոսա աւանդին յիշատակք ան-  
„ թիւ պատահարաց , և մթերք ի-  
„ մաստից . այլ զի՞նչ համեմատութի  
„ իցէ բնաւ ընդ չքնաղագոյնն 'ի մա-  
„ տենից և ընդ ուղեղ առն իմաստ-  
„ նոյ . և քանիօն առաւել պատուա-  
„ կան է ևնորահրաշ քան որ 'ի մա-  
„ տեանսն յայնոսիկ՝ մթերքն որ 'ի  
„ սմա : Անդ 'ի փոքու շտեմարանին  
„ գտանես դրոշմեալ մի ըստ միոջէ զա-  
„ մենայն կերպարանս կարեորս . եթէ  
„ կարդաս զնոսա , գան . եթէ 'ի բաց  
„ արձակես , խորասուզին յալս չգի-  
„ տեմ յոր 'ի ներքինս , և մեկնին առ  
„ 'ի տալ այլոց տեղի ... Ո՞ր ձեռն ձար-  
„ տար գիտաց թագուցանել 'ի կար-  
„ ծեցեալ տձե զանդուածին զայնչափ  
„ նկարագիրսն չքնաղս և գեղարուես-  
„ տըս , :

Ի՞ս գեղեցիկ իմաստներուն հետ  
խիստ աղէկ կը յարմարին նաև Ո՞հ-  
սինին աս անոյշ ու փափուկ խօսքերը .

« Ոքանեաց ակն ամիոփէ յինքն էից հոյլ .  
Քանիք յանձուկն 'ի ծիր գրաւին շողք ըսփիւռ .  
Անդ ամենայն ինչ հետ ընդ հետ նըկարի .  
Հարեալ 'ի տիպ շարժականին պատկերի .

Ճիշք որ կըրեն զայն 'ի յուղեղն տանին .  
Խուռան անդ թեցք հիւսք զի՞ տըկար , ովկերկին :  
Այլ 'ի նոսա ուշ իմեղեալ ապաստան ,  
Ենդ անկորուստ գանձէ աւանդ պատուական .

Որ ինչ ինձ աչք և լըսելիք ընծայեն ,  
Կարէ նա գնել անդ և բառնալ միշտ անդրէն :  
Նոյն ինքըն պահ ունի գանձուց իմոց անդ ,  
Հաւատարիմ 'ի տալանդրէն զիմն աւանդ :

Ոգիք անդ նուրբք կազմք յարաժամէ պատրաստ ,  
Դէս նըշանին կան որ առնէ նոցուն ազդ .

Հրաման հոգի իմ տայ , և հլու արբանեակք  
Սըփուն յանդամն իմ 'ի ձապուկս անդ երագ :

Հպատակք անտեսք , ընդ ո՞ր գընալք պողոտայ .  
Ո՞ զփըրկաւէտ եռամնդն արեանս իմում տայ :

Նա զկարեւորն առանց իմոյս հրամանի  
Ըզջերմութիւն տածէ յիմումն 'ի մարմնի .

Ի հաւասար շարժէ նա զփրտ իմ 'ի յոյզ ,  
Ի կենսականն անդ զփրոն 'ի բնի կազմեալ հոյզ .

Զեռուցանէ զիս 'ի սըլնթացն իւր 'ի ձեմ ,  
Յակն իւր անդրէն եզկ և յուշիկ եղեալ գէմ :

Ըսպառի միշտ , և նորոգի վերըստին .

Խողովակացն ընդ որ գընացք են նորին .

Բայցեալ գըրունք մուտս համարձակ նըմա տան .  
Պատրաստք 'ի գնել գարձելումն յետըս խափան :

Թանձր 'ի ջամփից արիւնն այն ջինջ մածանի ,  
Եւ փոփոխումն այն ձեգէ միւս այլ ըզկնի :

Յեղաշըրջին նա թանձրանայ 'ի մարմնն ,  
Եւ ընդ անդամն իմ որ նովաւ ոռողին :

Փոխակերպի 'ի գոյութիւն իմ 'ի բնիկ :

Ե՞ս ինչ ունիմ պահ օրինացս այսոցիկ ,  
Կամ թէ իմով ինչ հրամանաւըս կացին .

Հասու ևեթ հազիւ կարեմ գոլ նոցին :

Ինձ ըզնոցին միսք ուշիմ որ ըստ օրէ  
Քօղախընդրեալ զհանձար և զփարդ հոլանէ .

Զիմանաւըոյն այնորիկ օն ըզկարդին  
Զարարչապետն 'ի միտ առցուք 'ի նոսին » :

ԵՐԳ Ա. ՀԱ 277 — 316 :

## ԲԱՐ ԱՅ ԱԿ ԱՆ

### ԼԱՍԻԱԾ և ՂՐԴԱՐՊՈՒԵԼԻՆ :

ԼՐԱՉԲ որչափ ալչհաւտալու բան  
ըլլայ , փիլիսոփայ մարդիկ շատ ան-  
գամ խելք կը սորվին անկէ . ինչպէս  
նաև զգաստը գինովին ըրածներէն  
բան կը սորվի շատ անգամ , խելացին  
անխելքէն , գիտունը տգէտէն , մեծը  
պզտիկէն , զօրաւորը տկարէն : Այոյդ  
գիտենք թէ մեր ուսումնասէր կար-  
գացողներն ալքիչ շատ՝ խելք սորվե-  
ցան ան երազէն որ Ասծծի անունով  
իտալացի հեղինակէն թարգմանաթար

դրինք անցած տարուան օրագրին մէջ։ Հիմա ալ ան հեղինակին մէկ բարոյական դիտողութիւնը կը դնենք՝ յուսալով թէ որչափ որ ձմարտութիւնը երազէն վեր է, նոյնչափ ալ ասոր օգուտը երազին օգուտէն վեր ու մեծ ըլլայ։

“ Դնենք թէ մարդուն մէկը քիչ խօսող, մինակութիւն սիրող, իր բանին գործին՝ կամ կարդալու գրելուն ետևէն է. տնէն կ'ելլէ, պտոյտ մը կ'ընէ, երկու իրեք բարեկամի բարե կուտայ՝ կ'առնէ, տուն կը դառնայ, նորէն իր բաներուն հետ կ'ըլլայ։ Տեսնողները ասոր ինչ ըսեն աղէկ է։ — Ի՞ս ինչ արտառոց մարդ է. այսպիսի մարդ ուր տեսնուած է. աս խօսքն որ ըսաւ՝ գիտէք ինչ կը նշանակէ. աս շարժմունքն որ ըրաւ՝ գիտէք ինչ ըսել կ'ուզէ. ուսը որ շարժեց՝ աս ըսել կ'ուզէր. քովնատի որ նայեցաւ՝ միտքը աս էր. — ո՞ր մէկն ըսեմ. իսեղմ մարդուն խելքէն մտքէն չանցած բաները ուրիշները վրան կը մտածեն ու կը խօսին։ Աշխրբեիս բաները դերձանի կծիկ կը նմանին. թէ որ ծայր մը չես գտներ՝ մի դպչիր, չէ նէ՝ քանի կ'երթայ կը կունամըտի։ Աս կ'ըսեմ թէ ուրիշէն բան մը որ լսեցիր, կարժառի վրայ առ ան կծիկը, ու ըզգուշութեամբ փնտուէ գտիր ծայրը. ու որչափ որ կապ ու կունամըտուք հանդիպի՝ երկայնմտութեամբ քակէ, այնպէսով գլուխ կ'ելլես, այսինքն ձմարտութիւնը կը գտնես։ Իսենք թէ չկրցար քակել. ձգէ կծիկը մէկդի . . . Այրոր մէկուն գլուխը զանազան կասկածներով կամ պղտորութիւններով լցուած է մէկուն դէմ, պիտի գիտնաս որ տեսակ մը գինովութեան մէջ է. անոր համար ըրածը թողածը չգիտեր, խօսք չհասկընար, ոչ ինք զինքը կը ճանչնայ՝ ոչ զուրիշները. ինչպէս որ աս օրերս մէկուն պատահեցաւ։

Դրացի մը ունիմ որ կարգէ դուրս

1 Երես 238 :

մարդ մըն է. ասիկայ միտքը դրեր է միշտ՝ թէ աշխրբեիս վրայ առ ողջութիւն ու հանգստութիւն կայ նէ՝ պարապ կենալն է. երջանկութիւն կայ նէ՝ ելլել ասդիս անդին պարապ պտըտիլ՝ ատեն անցրնելն է. իսկ գինի օղի խմելն ու գինովնալը երջանկութեան վերջի ծայրն է. ուստի շատ անգամ այնպէս կը գինովնայ որ ինք զինքը կը կորսունցընէ, ու կը սկսի՝ կ'ըսեն՝ ծառերու քարերու բարկանալ, և անոնց վրայ կասկածներ ընել անոնց ոխ պահել։ Եղած է որ գիշեր ատեն բարձր ձայնով սկսեր է հայհոյել ու վար զարնել անոնք՝ որ փողոցներուն երկու կողմը պատ շիներ են, տուն շիներ են, ու հազիւ մէջտեղը կտոր մը տեղ թռղեր են քալելու. չմտածեր թէ ան իրեն մէյմը աս պատին՝ մէյմը ան պատին զարնուիլներուն պատճառը տները չեն, հապա իրեն գլխուն մէջի գինին է. Հիմա ան թողունք. քանի մը օր առաջ ասիկայ չարացար գինովցած ուշ ատեն տունկըդառնայ, անանկ խըմած որ եթէ շրջանակներ ու տախտակներ ունենալը նէ՝ գինիի տակառէն չէիր կը նար զինքը որոշել։ Իսեղմընկերը գիտէ ասոր բնուիր. առանց ձայն մը հանելու շրագը կ'առնէ առջել կ'ելլէ. անիկայ կէս մը սողալով՝ կէս մը ճանկըռութելով սանդուխէն վեր կ'ելլէ, շրագը սնտուկին վրայ դնել կու տայ. Ան սնտուկին վրայով՝ պատէն հայլի մը կախած է եղեր. աս մեր խելացին աչքը վեր կ'առնէ, հայլին մէջ ինք զինքը կը տեսնէ. բայց մոռցած ըլլալով թէ հայլին ինչ բան է, միտքը կը դնէ թէ օտար մարդ մըն է անիկայ որ եկեր իր տունը մտեր է՝ բան գովնալու համար. Բայց որովհետեւ բնութեամբ շատ մտածել չափեր, մէկէն չքարկանար. մանաւանդ թէ անոյշ երես ցուցընելով կը սկսի հարցընել թէ ինչ կ'ուզես իմ տունս, կամ թէ ինչ բանի համար եկեր ես. ետևէն ալ ականջները կ'երկընցընէ որ պատասխան առնէ, ձայն չկայ. Ո՞կյմ'ալ կը հարցընէ աւելի անուշու-

թեամբ, պատասխան չկայ: Իսոր կասկածները կը սկսին շատնալ. քաղաքավարութիւնը մէկդի կը դնէ, կը սկսի բարկանալով ըսել թէ Իսանկ ուշ ատեն ուրիշ տուն երթալը աղեկ բան չէ. ով կանչեց զքեզ. ելիր գնա տնէս, չէ նէ հիմա կ'առնեմ զքեզ սա պատուհանէս վար կը նետեմ, կը հաս կընաս ուրիշի տուն մտնելը. — պատասխան չկայ: — Ինկերը կը տեսնէ որ էրկանը խելքը վրան չէ. սիրտ կ'ը նէ որ հասկըցընէ անոր՝ թէ հայլի է դիմացինը. որու կ'ըսես. քիչ մնացերէ որ անոր ալ գլուխը պիտի պատռէ եղեր: Խելքովդ զիս խարել կ'ուզես, կ'ըսէ. ես քեզի չափ չեմ գիտեր հայլի ըլլալը կամ ըլլալը. չէ նէ դուն ալ ասոր հետ խօսք դրեր ես տունս կողոպտելու. շուտ զուրցէ տեսնեմ, որ չափ ատեն է որ աս անզգամը հոս է: Իինը պատասխան կուտայ թէ Վու հետգ ներս մտած պիտի ըլլայ: Ինատեն էրիկը կրակ կտրած՝ կը դառնայ նորէն հայլիին, կը սկսի ածականներով գոյականներով վորնտել, պոռալ կանչուրուտել. Դես ամրջնար կ'ըսէ՝ իմ կերպարանքս մտնելու ու տունս գալու որ տնեցիքս խարուին. բայց ես չեմ, չեմ խարուիր. ես աղեկ գիտեմ որ դուն՝ դու ես, իսկ ես՝ ես եմ. չէ նէ ես ոչ ատանկ այլանդակ անձոռնի կերպարանք ունիմ, ոչ ատանկ խոլը մոլոր նայուածք ունիմ, ոչ ատանկ կատղած փրփրած՝ մարդու հետ կը խօսիմ: Իս կ'ըսէ ու դրան ետեն գաւազանն առնելն ու կատաղաբար հայլիին զարնել ջարդութուրդը ընելը մէկ կ'ընէ. օտարականն ալ աներեսը կ'ըլլայ: Իզէկ որ այնչափ յոգնելէն ուժը կտրերէ, ու ասդիս անդին դառնալու ատենը գետինը փռուեր քնացերէ բոլոր գիշերը. չէ նէ անշուշտ խեղջ ընկերոջը գլխուն ալ հայլիին փորձանքը պիտի բերէ եղեր:

Հիմա թէ որ գինին աս մարդուն գլուխը զարկած ըլլար, կրնար հասկընը թէ դիմացինը հայլի է, ամէն

բան կը լմըննար: Ի՞այց երբոր մարդս իր միտքը ծուռ սկիզբ մը գրած է, կարծէ թէ իրեն ամէն մտածմունքն ու խօսակցութիւնը շիտակ է: Ի՞հարկէ. ատենը ուշ, տունը օտար մարդ մը՝ որ ոչ պատասխան կուտայ, ոչ ինք զինքը կ'արդարացընէ, հապա տանտիրոջը գէմ կը բարկանայ ալ. ի՞նչ գիտնայ խեղջ գինովը իրաւունք ունի. յանցանքը հայլիինն է: Ի՞հա ամէն կասկած ալ այսպէս է. և թէ որ մէկը Ճշմարտութիւնը քննել ուզէ, շատ անգամ կը տեսնէ որ հայլիի առջև կեցած է, այսինքն սուտը իրաւի տեղ գրած ու խարուած է: Ի՞այց եկուր աես որ քիչ մարդ կայ Ճշմարտութիւնը քննող: Ո՞է կուն վրայ գէշ կը խօսին. լսողը կը լսէ ու կը հաւտայ, և ինչուան որ ան խեղջ բամբասուուղը ինքինքը արդարացընէ՝ տարիներ կ'անցնին: Ի՞նոր համար, թէպէտ սովորական առակ մըն է որ “Ոտութէ մէկ ոտքը կարծ կ'ըլլայ,, կ'ըսեն, բայց ինծի կ'երեւայ թէ Ճշմարտութեան մէկ ոտքը կարծ է. իսկ ստութիւնը նապաստակի պէս լեռնէն վեր կը փախչի կ'երթայ: Ի՞ս բանիս աղեկ օրինակ է ան այլաբանութիւնը որ ատենով հայուն մէկը պատմեց ինծի. ասոր վրայ իր երկրի մարդիկը զրպարտութիւն մը ըրած են եղեր, որ տամնը հինկ տարիէն ետե հազիւ կը րցէր է արդարանալ:

Ոկսաւ հայը ասանկ խօսիլ իրեն արեւելեան Ճոռոմութեամբը. “ Ի՞նչպէս որ Ո՞ասիսու սարին գլուխը բարդ ձիւները կուգան ու ապառաժ քարերը կը ծածկեն աներեսը կ'ընեն, ու տարիներ անցնելէն ետքը հազիւ կը հալին, ասանկ ալ սուտ զըլլապարտութիւնը մարդկանց անկընթիւն մէջ լցուելէն ետքը, շատ աշխատանք պէտք է որ Ճշմարտութեան Ճառագայթները անոր յաղթեն, ստութիւնը գուրս հանեն: — Ի՞ըսեն թէ ատենով Ո՞տութիւնը դժոխքէն դուրս ելեր է, տեսեր է որ մարդկանց խելքը միտքը Ճշմարտութեան ետեն է.

քանի կ'երթայ՝ նախանձէն կը հալի կը մասի, չգիտեր ինչ ձար ընէ որ աս իրեն ոխերիմ թշնամին՝ այսինքն Շմարտութիւնը՝ մարդկանց ազքէն հանէ . մէկ դիէն խելքը չկտրեր որ մարդիկ ան սիրուն Շմարտութենէն երես դարձընեն, ու իր ետևէն իյնան . մէկալ դիէն ալ ելած տեղը չուզեր նորէն մտնել : Ի՞ս մտմտուքով գլուխը կախած՝ տարակուսած՝ ասդիս անդին պտրտելու ատենը, ասոր դիմացը կին մը կ'ելլէ՝ վրան ջար մը ձգած . անկէ զատ գլխուն վրայ ալ հովանոց մը առած, որպէս զի ամենեին չձանչցուի : Իսոնք մէկզմէկ տեսնելուն պէս, չեմ գիտեր՝ արիւննին կը քաշէ ինչ կ'ըլլայ, մէկէն 'ի մէկ իրար կը ձանչնան, կը վազեն իրարու կը պըլլուին . ասոնք երկու քոյր են եղեր, մէկուն անունը Ատութիւն, մէկալինը Չարութիւն : Արնստին քարի մը վրայ, կը սկսին սրտէ սիրտ խօսակցութիւններ ընելու . խօսք կը բացուի Շմարտութեան վրայ, մէկէն կ'իմացուի որ ասոնք երկուքն ալ մահուչափ թշնամի են անոր . “ Դիտցած եղիր քուրիկս, կ'ըսէ Չարութիւնը . բազդը իրկեց զքեզ որ մեր թշնամոյն վայն՝ ի վրան բերենք . ինչուան հիմադուն պակաս էիր : Ասեր եմ թէ քու լեզուդ խիստ անոյշ է . այդպիսի ձարտասանութիւն պէտք է որ մարդիկ համոզուին Շմարտութեան դէմելլելու : Խա թէպէտ և միշտ ծածուկ կը պտրտիմ որ թշնամիս զիս չտեսնէ ու չմատնէ, ձար չըլլար . բայց որովհետև մարդկանց սրտին վրայ մշյմը տիրեր եմ, յուսամ որ քիչ ատենէն ան թշնամոյս ազքէն կ'ազատիմ . բայց քու ձարտասանութիւնդ խիստ հարկաւոր է մեզի . . . : Արբոր անոնք այսպիսի խօսակցութեան հետ էին, գեղացի օրիորդ մը կ'անցնի ասոնց առջեւէն, ու վախվըխելով մը չորս դին նայելով քարանձաւի մը բերանը կուգայ, ձեռքի սապատը վար կը

դնէ, քիչ մը կը կենայ . մէյմըն ալ իր եղբայրը՝ որ զինքը մեռցընել ուզող աւազակի մը ձեռքէ հոն փախեր պահութեր է եղեր, կ'ելլէ քարանձաւէն, կ'առնէ սապատը, չնորհակալ կ'ըլլայ քրոջը, երթաս բարով կ'ըսէ, նորէն շուտ մը ներս կը մտնէ . մէկալն ալ իր տեղը կը դառնայ : Ի՞ս զգամ Ատութիւնը ասթանս տեսածին պէս՝ կ'ելլէ Չարութեան հետ մէկտեղ գեղը կը մտնէ, ու դռնէ դռւռ պտրտելով՝ չարիք չմնար որ չխօսի մէկուն մէկալին : Այեղձ գեղացին օր մը տրտում տիսուր քալելու ժամանակը յանկարծ Շմարտութեան դիմացը կ'ելլէ . մէկէն ոտքը կ'իյնայ, ու կը սկսի լարով ըսել անոր . “ Հոյս քեզի մնաց, ով արդար փաստաթան . դուն օգնէ ինծի . . . : Պատասխան կուտայ Շմարտութիւնը, թէ “ Չեռքէս եկած օգնութիւնը ես քեզի ընելէն չեմ քաշուիր . միայն թէ ատ բանիդ մէջ երկու գժուարութիւն կայ . մէյմը որ զքեզարդարացընելու համար պէտք է որ թշնամիներուդ յայտնուի քու եղբայրդ . մէյմըն ալ որ թէպէտ Ատութիւնը մէկէն 'ի մէկ տիրեց ամենուն մտքին, բայց ես պէտք է կամաց կամաց դուրս հանեմանոր խաղքութիւնը : Ա ամս զի աս պիտի գիտնաս, թէ քանի որ անիկայ աշխարհը եկաւ, ես աս խեղձութեան հասայ . . . աս կ'ըսէ ու կը ցուցընէ որ ոտքին մէկը կոտրած, մէկալն ալ ծումրուկած է եղեր : “ Բայց որպէս զի հասկընաս թէ ով որ իր յոյսը իմ վրաս դրած է՝ ոչ երբէք երեսէ կ'իյնայ, առ գետնէն սա երկու կտոր փայտերն ու թէերուս տակը տուր . ես հիմա կը սկսիմ պտրտիլ, ու ձեռքէս եկածին չափ քու անմեղութիւնդ երեան հանել . . . : Ա օան երկու տարի կ'անցնի, խեղձ գեղացին սրտին ցաւէն կ'իյնայ կը մեռնի . իսկ իրեն անմեղութիւնը վեց տարիէն հազիւ դուրս կ'ելլէ կաղ Շմարտութեան ձեռքովը . . . ”